Տեղեկանք նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~*Հոդված 1.* «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր բովանդակությամբ 27.1.-րդ կետով՝~~

~~«27.1. հաստատում է վճարովի կայանատեղիների վայրերը, մեքենայի համար նախատեսված վճարը, որոնք նախատեսված են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար՝ վաճառքի կամ վարձույթի նպատակով.»:»~~

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 18.1.-րդ կետով՝
«18.1. համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող այն վայրերը, որտեղ կազմակերպվում է տրանսպորտային միջոցի վաճառքը կամ վարձույթը, ինչպես նաև կարող է սահմանել այդ վայրերի վճարի չափը.»:

~~*Հոդված 2.* Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր բովանդակությամբ 24.1.-րդ կետով՝~~

~~«24.1. սահմանում է վճարովի կայանատեղիների վայրերը, մեքենայի համար նախատեսված վճարը, որոնք նախատեսված են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար՝ վաճառքի կամ վարձույթի նպատակով.»:»~~

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 18.1.-րդ կետով՝
«18.1. ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող այն վայրերը, որտեղ կազմակերպվում է տրանսպորտային միջոցի վաճառքը կամ վարձույթը, ինչպես նաև կարող է առաջարկել սահմանել այդ վայրերի վճարի չափը.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~օրվան~~ հաջորդող ~~օրը:~~ օրվանից: